ՀՈԴՎԱԾՆԵՐ · СТАТЬИ

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Խ. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ականավոր գործիչ, Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ և զինակից Ստեփան Շահումյանի կյանքն ու գործունեությունը սերտորեն կապված է Ռուսաստանի և Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումների պատմության հետ։ Շահումյանը լենինյան շկոլայի պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ էր, մասսաների տաղանդավոր կազմակերպիչ, աչքի ընկնող ժուռնալիստ-հրապարակախոս, խոշոր տեսաբան։

Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ս. Սպանդարյանը և նրանց շուրջը համախմբված հայ ռևոլյուցիոներները իրենց մատերիալիստական աշխարհայացքով, ռևոլյուցիոն մարքսիզմի դավանանքով, պրոլետարական ինտերնացիոնալիզմով XX դարի սկզբին մի նոր, լուսավոր էջ բացեցին հայ իրականության, հայկական կյանքի և հասարակական մտքի զարգացման պատմության մեջ։

Ստ. Շահումյանն իր ռևոլյուցիոն ամբողջ եռանդն ու կորովը, իր ամբողջ գիտակցական կյանքը անձնվիրաբար նվիրեց բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ազատագրությանը, սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի գործին, կոմունիզմի համար մղվող մեծ պայքարին։

1

Ստեփան Գևորգի Շահումյանը ծնվել է 1878 թվականի հոկտեմբերի 13-ին (1-ին) Թիֆլիսում։ Նախնական կրթությունը ստացել է Թիֆլիսի ռեալական ուսումնարանում, որտեղ աչքի է ընկել իր բացառիկ աշխատասիրությամբ և ընդունակություններով։ 1898 թվականին նա կապվում է ցարիզմի կողմից Կովկաս աքսորված ռուսական ռևոլյուցիոն մարքսիստների հետ և ծավալում ռևոլյուցիոն գործունեություն։

1899 թվականին Ստ. Շահումյանը Ջալալօղլիում (Ստեփանավան) հիմնադրում է առաջին մարքսիստական խմբակը Հայաստանի տերիտորիայում։

1900 թվականին Շահումյանը ընդունվում է Ռիգայի Պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական ֆակուլտետը։ Ուսումնառությանը զուգընթաց նա նետվում է ռևոլյուցիոն պայքարի մեջ, ակտիվ մասնակցություն ունենում Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժումներին և, իր իսկ խոստովանությամբ, քաղաքական մկրտություն է ստանում «ռուսաց նորագույն ռևոլյուցիոն ավազանում»[1], «Ստեփան Շահումյանը հանդիսացել է ՌՍԴԲՊ Ռիգայի կազմակերպու-

---

[1] Ստ. Շահումյան, *Երկեր*, հատ. 1, Երևան, 1955, էջ 26։

Յան անդամ, ինստիտուտում կազմակերպել է մարքսիստական անլեգալ «թեորետիկ» խմբակ»[1]։ Ռիգայում սովորելու տարիներին (1900—1902) Ստ. Շահումյանը դառնում է լենինյան-իսկրայական, աշքի է ընկնում ուսանողական շարժումների ղեկավարման գործում։

1902 թվականի փետրվարին նա, որպես Ռիգայի ուսանողության պատգամավոր, մասնակցում է Պետերբուրգում գումարված ուսանողության Համառուսաստանյան առաջին համագումարին, որտեղ հանդես է գալիս փայլուն ճառով, հայտարարում, թե անիրագործելի են բոլոր տեսակի վառ ձգտումները, համալսարանական ապատությունները, «...մինչև որ չխորտակվի քաղաքական գլխավոր խոչընդոտը, այն է՝ ցարիզմը»[2]։ Վերադառնալով համագումարից, Ստ. Շահումյանը փետրվարի 11-ին, մի քանի այլ ուսանողների հետ միասին, գլխավորում է Ռիգայի Պոլիտեխնիկական ինստիտուտում բռնկված ուսանողական խոշոր ցույցը, որի պատճառով էլ նրան հեռացնում են ինստիտուտից և վարչական կարգով արտաքսում Կովկաս։ Այստեղ նա անմիջապես ներգրավվում է Անդրկովկասի լենինյան-իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեության մեջ, ակտիվ մասնակցություն է ունենում ՌՍԴԲՊ Թիֆլիսի, Բաքվի կոմիտեների գործունեությանը, հսկայական աշխատանք է կատարում բանվորների շրջանում, նրանց ներգրավելով լենինյան-իսկրայական կազմակերպությունների շարքերը։

1902 թվականին Ստ. Շահումյանի ակտիվ մասնակցությամբ հիմնադրվում է Անդրկովկասում առաջին լենինյան սոցիալ-դեմոկրատական հայկական կազմակերպությունը՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների Միությունը», որը ՌՍԴԲՊ տեղական ճյուղերից մեկն էր։ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որը 1903 թ. մարտին մասնակցեց ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական Կոմիտեի հիմնադրմանը, 1902 թվականի հոկտեմբերին հրատարակում է իր տպագիր օրգան «Պրոլետարիատը», որը լենինյան-իսկրայական ուղղության առաջին հայերեն թերթն էր։ Այդ թերթում մի շարք այլ ծրագրային հոդվածների հետ միասին տպագրված էր «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստը»[3], որի ստեղծմանը ղեկավար մասնակցություն է ունեցել Ստ. Շահումյանը։

Վ. Ի. Լենինը արտասահմանում ծանոթանալով «Պրոլետարիատ» թերթի, հատկապես «Մանիֆեստի» բովանդակության հետ, բարձր գնահատեց նրա դերը պրոլետարական ռևոլյուցիայի գործում։ «Մենք ամբողջ հոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների Միության» Մանիֆեստը,— գրել է Վ. Ի. Լենինը,— և մանավանդ ազգային հարցին ճիշտ դրվածք տալու նրա ուշագրավ փորձը։ Խիստ ցանկալի կլիներ, որ այդ փորձը հասցվեր մինչև վերջը»[4]։

1902 թվականի աշնանը Ստ. Շահումյանը մեկնում է արտասահման և ընդունվում Բեռլինի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը, որտեղ որոշ ընդհատումներով դասախոսություններ է լսում մինչև 1905 թվականը։ Բեռլինում Շահումյանը անդուլ աշխատանք է կատարում ՌՍԴԲՊ արտասահմանյան կազմակերպություններում, մոտիկից ծանոթանում և հաղորդակից է լինում Եվրոպայի ռևոլյուցիոն շարժումներին, անձնական հանդիպումներ է

---

[1] „История Латвийской ССР", т. 2, Рига, 1954, էջ 265։

[2] Ար. Մե-ն [Արշավիր Մելիքյան], Հիշողություններ Ս. Շահումյանի մասին, «Նոր աշխարհ», № 2, Թիֆլիս, 1922, սեպտեմբեր, էջ 157։

[3] Տե՛ս Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, Հայպետհրատ, 1955, էջ 41—47։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, Հայպետհրատ, 1949, էջ 411։

Ստ. Շահումյանի դիմաքանդակը
գործ՝ Ս. Սարգսյանի, 1948 թ. (Հայաստանի
Պետ. պատկերասրահ)

ունենում և կապ ստեղծում Ա. Բեբելի, Ֆ. Մերինգի և միջազգային բանվորական շարժման այլ ականավոր գործիչների հետ։ Ակադեմիական պարապմունքներին զուգընթաց Շահումյանը շատ ժամանակ էր հատկացնում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդների հրապարակային ելույթներին և դատախոսություններին, գիտական կոմունիզմի հիմունքների խոր ուսումնասիրությանը։ Ստ. Շահումյանը ՌՍԴԲՊ Բեռլինի կոմիտեի գործունյա և ակտիվ անդամներից մեկն էր։ Մ. Ն. Լյադովը, որը այդ ժամանակ պարապում էր Լենինյան-իսկրայական ուղղությանը հարող ուսանողների Բեռլինի խմբակի հետ, պատմում է, որ Շահումյանը ոչ միայն խոսքով, այլև իր ամբողջ էությամբ իսկրայական էր, ռևոլյուցիոն մարքսիստ, կատարելապես կազմակերպված և մինչև վերջը գիտակցված աշխարհայացքով։ Նույն Լյադովի վկայությամբ, Շահումյանը հանգիսացել է Լայպցիգի մարքսիստական խմբակի ղեկավարը[1]։

Ստ. Շահումյանին լավ գիտեին գերմանական սոցիալ-դեմոկրատական շրջաններում։ Նա հաճախակի լինում էր Բեռլինի բանվորական թաղամասերում կազմակերպված միտինգներում ու ժողովներում։

1903 թվականի ապրիլին Վ. Ի. Լենինը և «Իսկրայի» խմբագրությունը Լոնդոնից տեղափոխվում են Ժնև, ուր ավելի է աշխուժանում ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատական աշխատանքը։ Այդ օրերին Շահումյանը մեկնում է Ժնև և անձամբ ծանոթանում Վ. Ի. Լենինի հետ։ Ռևոլյուցիոն մտքի խոշորագույն

---

[1] Տե՛ս М. Лядов, Из жизни партии, Воспоминания, М., 1956, стр. 11 և ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7, Մ. Լյադովի «Հեռու անցյալից» հիշողությունները։

տիտանի, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գործի մեծ շարունակողի՝ Վ. Ի. Լենինի հետ ունեցած այդ անձնական ծանոթությունը և ապա սերտ մտերմությունը բացառիկ մեծ նշանակություն ունեցան Շահումյանի հետագա ամբողջ ռևոլյուցիոն գործունեության ընթացքում։ Այդ ժամանակից սկսած Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի միջև հաստատվում է մշտական նամակագրություն և ջերմ բարեկամություն։ ՌՍԴԲՊ II համագումարից անմիջապես հետո Ստ. Շահումյանը ռևոլյուցիոն բեղմնավոր աշխատանք է կատարում արտասահմանում։ Նա աշխուժորեն արձագանքում է քաղաքական կարևորագույն հարցերին։ «Մեր տակտիկական տարաձայնությունները» նշանավոր ռեֆերատում (1903) Շահումյանը վճռական հարված է հասցնում մարքսիզմի ռևիզիոնիստներին և ապացուցում է, որ պարտիան ոչ թե պետք է քարշ գա իրադարձությունների պոչից, այլ ընթանա դրանց առջևից, որ պարտիան ղեկավար և ուղղություն տվող ուժ է[1]։ Շահումյանը 1904 թ. գլխավորում է ՌՍԴԲՊ Կենտկոմին կից՝ հայերեն և վրացերեն լեզուներով մարքսիստական դրականություն հրատարակող հանձնաժողովի աշխատանքը։ Շահումյանը 1903—1904 թվականներին հայերեն է թարգմանում և հրատարակում Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի, Գ. Վ. Պլեխանովի առանձին աշխատությունները, այդ թվում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը» (1904, ժնև), որը նշանավոր իրադարձություն հանդիսացավ հայ հասարակական-քաղաքական կյանքում։

Անդրկովկասի բոլշևիկները լավ գիտեին Ստ. Շահումյանին որպես կայուն լենինյանի, սկզբունքային բոլշևիկի և մեծ էրուդիցիայի տեր մարքսիստի։ Արտասահմանում սովորելու տարիներին նա շարունակում էր իր սերտ կապը Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հետ, նրանց իրազեկ պահում մեծ Լենինի ցուցումներին։

Ստ. Շահումյանը 1904 թվականի ապրիլին վերադարձավ Կովկաս։ Զինված Լենինի ցուցումներով, նա ուղղություն է տալիս Անդրկովկասի բոլշևիկների պայքարին, հետևողականորեն պաշտպանելով լենինյան պարտիայի իդեոլոգիական և կազմակերպական հիմունքները, նրա տակտիկան և ստրատեգիան։ «Պրոլետարիատի կոիվ», «Պրոլետարիատի կովի թերթիկ» թերթերում և մամուլի այլ օրգաններում Ստ. Շահումյանը հանդես է գալիս մարքսիստական բազմաթիվ փայլուն հոդվածներով։ Առանձնապես ուշագրավ է «Պրոլետարիատի կովի թերթիկի» 1904 թվականի հոկտեմբերի №№ 12—13-ում հրապարակված նրա «Երևանից (հայ իրականությունից)» խորագրով հոդվածը, որ նա գրել է Հայաստանի գավառներում անձամբ լինելուց և հայ իրականությանը ծանոթանալուց հետո։ Ստ. Շահումյանը այդ հոդվածում ցույց է տալիս, որ դաշնակցությունը ռեակցիոն, անսկզբունք պարտիա է, որը հայ իրականությանը թունավորում է շովինիզմով, և որ ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան արդեն իր ազդեցությունը տարածում է հայկական գավառներում։ «Սոցիալ-դեմոկրատիան,— գրել է Շահումյանը,— իր համարձակ պրոպագանդայով, «պայծառ ճառագայթի նման» կթափանցի հայկական պրովինցիայի այդ «մթին թագավորությունը», բնակչությանը կսովորեցնի մտածել քաղաքականորեն և գործել քաղաքականորեն, իր դրոշի տակ կկազմակերպի նրա պրոլետարական և

[1] Շահումյանի վերոհիշյալ «ռեֆերատը» մեզ չի հասել։ Հենվում ենք ժամանակակիցների հիշողությունների վրա (տե՛ս Մանուչարյանի (Զար) «Սաեփանն արտասահմանում» խորագրով հոդվածը, «Բակինսկի ռաբոչի», 20 սեպտեմբերի, 1922)։

կիսապրոլետարական մասսաներին և վճռական բոպեին նրանց կտանի գրոհելու ինքնակալությունը, եղբայրորեն միացած... ռուս ժողովրդի հետ»[1]։

Այսպիսով, ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին Ստ. Շահումյանը կազմակերպչական և պրոպագանդիստական մեծ աշխատանք է կատարում Անդրկովկասի պրոլետարիատի շարքերում, ուղիներ է որոնում հայ աշխատավորության քաղաքական-մարքսիստական դաստիարակության կազմակերպման համար, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի և իր մյուս ընկերների հետ միասին պարտիայի Կենտկոմի և Կովկասյան Միութենական Կոմիտեի օգնությամբ աշխատանք է ծավալում հայերեն մարքսիստական գրականության և թերթերի հրատարակության ուղղությամբ։

2

Ինչպես ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին, այնպես էլ ռևոլյուցիայի տարիներին Ստ. Շահումյանը հետևողականորեն պաշտպանել է լենինյան տակտիկական գիծը, անհաշտ պայքար է մղել մենշևիկների, էսեռների և բուրժուա-նացիոնալիստական բոլոր հոսանքների դեմ։ Ստ. Շահումյանը միշտ ռևոլյուցիոն մարտերի առաջին գծումն էր։ Նա աչքի էր ընկնում իր կրակոտ ելույթներով, հրապարակախոսական-պրոպագանդիստական բեղմնավոր աշխատանքով, մարքսիստական տրամաբանությամբ։ 1904—1906 թվականներին Ստ. Շահումյանը շրջագայում է Անդրկովկասի արդյունաբերական կենտրոնները, Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, հանդես է գալիս բանվորների և գյուղացիների առջև, պարզաբանում է բոլշևիկյան պարտիայի լենինյան տակտիկան, օգնում է ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ամրապնդմանը։ Ստ. Շահումյանի անմիջական ղեկավարությամբ 1905 թվականին ՌՍԴԲՊ անջատ խմբակները Երևանում միավորվում են մեկ միասնական կազմակերպության՝ ՌՍԴԲՊ Երևանի քաղաքային բոլշևիկյան կազմակերպության մեջ։

1905 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ի. Վ. Ստալինի հետ միասին Շահումյանը խմբագրում է ռուսերեն լեզվով Թիֆլիսում հրատարակվող, Կովկասում առաջին բոլշևիկյան ամենօրյա լեգալ թերթը՝ «Կավկազսկի ռաբոչի լիստոկը», որը ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական IV կոնֆերենցիայում ճանաչվեց որպես Կովկասյան Միության պաշտոնական օրգան։ «Կավկազսկի ռաբոչի լիստոկում» է լույս տեսել Շահումյանի «Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ» փիլիսոփայական երկը, ուր նա հիմնավորում է արտացոլման մարքսիստական թեորիան, ցույց է տալիս, որ դիալեկտիկական մատերիալիզմը միակ գիտական մեթոդն է։ Այստեղ նա խստորեն քննադատում է միջազգային օպորտունիզմը և նրա լիդեր Բեռնշտայնին, բուրժուական սոցիոլոգ Զոմբարտին։ Շահումյանը դիալեկտիկական մեթոդը անվանում է պարտիայի «ուժն ու հզորությունը»։ Այս աշխատության մեջ Շահումյանը ոչ միայն պաշտպանել է մարքսիստական փիլիսոփայության կարևորագույն դրույթները, այլև դրսևորել է մարքսիստ-թեորետիկի իր խոշոր ստեղծագործական ընդունակությունները։

---

[1] Ստ. Շահումյան. Երկեր, հատ. 1, էջ 52։

1906—1907 թվականներին Շահումյանը Ս. Սպանդարյանի, Ս. Կասյանի հետ միասին հիմնադրել և խմբագրել է բոլշևիկյան «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր» և այլ թերթերը, որոնք խոշոր դեր խաղացին հայ իրականության մեջ։ Ինչպես այդ, այնպես էլ մյուս թերթերում 1905—1907 թթ. հրապարակված հոդվածներում Շահումյանը պաշտպանում և զարգացնում է մարքսիստական նոր տիպի պարտիայի լենինյան տակտիկան, պայքարում է ռևոլյուցիայի թշնամիների դեմ, մոբիլիզացնում է աշխատավոր մասսաների ուժերը ցարիզմի դեմ մղված պայքարում, պրոպագանդում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները։ 1906 թվականին ՌՍԴԲՊ Երևանի, իսկ 1907 թվականին ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպությունները Շահումյանին ընտրում են մեր պարտիայի IV և V համագումարների դելեգատ, որտեղ նա հետևողականորեն պաշտպանում է լենինյան տակտիկան, իր ելույթներում մերկացնում է մենշևիկներին, հատկապես կովկասյան մենշևիկների պարագլուխ Ն. Ժորդանիային։

ՌՍԴԲՊ IV («Միավորիչ») համագումարից վերադառնալով Թիֆլիս, Շահումյանը մայիսի վերջին մեկնում է Երևան, ավելի քան մեկ շաբաթ անց է կացնում այնտեղ, մոտիկից օգնում է քաղաքի պարտիական կազմակերպությանը, կինում նրան Վ. Ի. Լենինի ցուցումներով։

Լինելով ազգային հարցի խոշոր գիտակներից ու տեսաբաններից մեկը, Շահումյանը դեռևս 1906 թվականին նախ «Կայծ» թերթում և ապա առանձին բրոշյուրով, հրատարակում է իր «Ազգային հարցը և սոցիալ- դեմոկրատիան» նշանավոր աշխատությունը, որի մեջ մարքսիստորեն քննարկում է ազգային հարցի դրվածքը պրոլետարիատի, մասնավորապես Ռուսաստանի պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի խնդիրների հետ սերտորեն կապված։ Զինված պատմության մատերիալիստական ըմբռնումով և մարքսիստական դիալեկտիկական մեթոդով, Ստ. Շահումյանը փայլուն կերպով պաշտպանում և հիմնավորում է Կոմունիստական պարտիայի՝ ազգային հարցի վերաբերյալ ծրագիրը, ոչնչացնող քննադատության ենթարկելով ազգային հարցի արևմտա-եվրոպական բուրժուական թեորետիկներին։ Շահումյանի այդ աշխատությունը արժեքավոր ավանդ է ազգային հարցի մարքսիստական թեորիայի գանձարանում։ Շահումյանն իր աշխատություններում մերկացրել է բուրժուական նացիոնալիստներին, ցույց է տվել դաշնակցության կոնտրռևոլյուցիոն էությունը։ Նա գրում է. «Կովկասի հայ բուրժուազիան բնականորեն «Դաշնակցություն» պարտիայի մեջ տեսնում էր իր հարազատ զավակին, իր լավագույն դաշնակցին, իր շահերի լավագույն արտահայտչին ու պաշտպանին և այդ պատճառով իր բոլոր ուժերով, նյութապես և բարոյապես, աջակցում էր այդ պարտիային»[1]։

Նույնպիսի կրքոտությամբ Շահումյանը մերկացրել է հնչակյաններին ու սպեցիֆիկներին։ 1916 թվականի դեկտեմբերին գրած իր «Ազգային հարցը և ռևոլյուցիոն սոցիալ- դեմոկրատիան» աշխատությունում քննադատելով հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների քաղաքականությունը, նա գրել է. «Ի՞նչ տվեց հայ ժողովրդին հնչակյան ու դաշնակցական քաղաքականությունը, ի՞նչ բարիքներ ստեղծեց նա հայ ազգի համար։

Միմիայն դժբախտություն, կոտորածներ ու ավերումներ»[2]։

---

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 284։

[2] Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 408։

Շահումյանը բուրժուական նացիոնալիզմին հակադրել է պրոլետարական ինտերնացիոնալիզմը, բոլոր ազգությունների աշխատավորների համերաշխության և ազգային միջնորմների ոչնչացման պահանջը։ Շահումյանը ցույց է տվել, որ բուրժուական նացիոնալիզմը ոչ միայն ընդհանուր ոչինչ չունի ժողովուրդների իսկական շահերի հետ, այլև այդ շահերի մոլեռանդ թշնամին է։ Նա նախազգուշացրել է, որ նացիոնալիզմը, ինչպես և ամեն մի պարտված ու մահվան դատապարտված իդեոլոգիա, խորամանկ է, հարմարվող և դարանակալ։

3

1907 թվականի հունիսին Շահումյանը ՌՍԴԲՊ V համագումարից վերադառնալով Կովկաս, պարտիայի կամքով փոխադրվում է Անդրկովկասի արդյունաբերական խոշորագույն կենտրոնը, Ռուսաստանի ռևոլյուցիոն բանվորական շարժումների կարևորագույն օջախներից մեկը՝ Բաքու։ Այնտեղ են հավաքվում նաև բոլշևիկյան պարտիայի մի շարք ականավոր գործիչներ՝ Ի. Ստալինը, Կ. Վորոշիլովը, Մ. Օլմինսկին, Գ. Օրջոնիկիձեն, Ս. Սպանդարյանը և ուրիշներ։

Բաքվում Սա. Շահումյանը պարտիական-քաղաքական խոշոր աշխատանք է ծավալում, օգտագործում է լեգալ և անլեգալ բոլոր հնարավորությունները, խմբագրում է և ակտիվ աշխատակցում «Բակինսկի պրոլետարի», «Բակինսկի ռաբոչի», «Գուդոկ» և այլ թերթերին։ 1907 թվականից մինչև իր կյանքի վերջին օրերը Սա. Շահումյանը հանդիսանում էր Բաքվի պրոլետարիատի սիրված ու ճանաչված առաջնորդը, Բաքվի բոլշևիկյան կազմակերպության մարտական ղեկավարը։

Ինչպես միշտ, այնպես էլ ստոլիպինյան ռեակցիայի տարիներին Սա. Շահումյանը մնաց որպես անսասան, կայուն բոլշևիկ, բոցաշունչ ռևոլյուցիոներ։ Նա պրոպագանդիստական ու կազմակերպական հսկայական աշխատանք է կատարում, ծավալում է ժուռնալիստական-հրապարակախոսական բեղմնավոր գործունեություն՝ հմտորեն օգտագործելով լեգալ ու անլեգալ հնարավորությունները։ Վճռականորեն հանդես գալով լիկվիդատորների դեմ, Շահումյանը հաստատակամորեն պայքարում է պարտիական շինարարության հարցերում լենինյան սկզբունքներն ու ցուցումներն անշեղորեն կենսագործելու համար, ամրապնդում է բանվորների և գյուղացիների հավատը մոտալուտ ռևոլյուցիոն վերելքի նկատմամբ։

1908 թվականի մայիսին Մ. Ցխակայային գրած նամակում Շահումյանը մերկացնելով լիկվիդատորներին, նշել է, որ Բաքվի պրոլետարիատը միասնական պարտիայի պահպանման կողմնակից է։ «Ինձ թվում է,— գրել է Շահումյանը,— որ մեր պարտիան ավելի լրիվ է ներկայացնում դասակարգային պայքարը—քան միությունները, և եթե «ժամանակավոր» գոյության և անհետացման մասին խոսելու լինենք, ապա այդ ավելի շատ պետք է ասել միությունների մասին, որքանով որ նրանք դեռ չեն համակվել սոցիալիզմով։ Սոցիալիստական պարտիային են միանալու միությունները, և ստեղծվելու է պրոլետարիատի մի միասնական դասակարգային կազմակերպություն, որը պայքար է մղելու բոլոր ձևերով ու բոլոր ասպարեզներում»[1]։

[1] ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 157, оп. 2, ед. хр. 54, лл. 6—8. Հրապարակվում է առաջին անգամ.

1910—1912 թվականներին Սա. Շահումյանը հանդես է գալիս մի շարք հոդվածներով, այդ թվում՝ «Ընթերցողի տարակուսանքը», «Գորկու մասին», «Մի քանի խոսք Լ. Ն. Տոլստոյի կրոնի մասին», որտեղ փայլուն կերպով պաշտպանում է ռուսական առաջավոր դրականությունն ու կուլտուրան, գրականագիտության դիրքերից գնահատում Լ. Տոլստոյի և Մ. Գորկու ստեղծագործությունները։

1911 թվականի մարտին Բաքվում Սա. Շահումյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Սովրեմեննայա ժիզն» թերթը, որի № 3-ում տպագրվում է Վ. Ի. Լենինի «Մարքսիզմը և «Նաշա Ժարյան» հոդվածը՝ Վ. Իլյին ստորագրությամբ։ Վ. Ի. Լենինն այդ թերթին աշխատակցել էր Շահումյանի խնդրանքով։

Ստ. Շահումյանը ակտիվ մասնակցություն է ունենում ՌՍԴԲՊ VI (Պրագայի) կոնֆերենցիայի նախապատրաստմանը։ 1911 թվականի սեպտեմբերի 30-ին Բաքվում Ստ. Շահումյանը ձերբակալվում է։ Մի քանի ամիս Բայիլովի բանտում պահվելուց հետո, 1912 թվականի հունիսին, Կովկասի փոխարքայի կարգադրությամբ, 5 տարի ժամանակով արտաքսվում է Կովկասի սահմաններից դուրս՝ Աստրախան։ Պրագայի կոնֆերենցիան ընտրում է բոլշևիկյան կենտկոմ՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ։ Կենտկոմի կազմում իր բացակայությամբ ընտրվում է նաև Շահումյանը։

Աստրախանում Շահումյանը շարունակում է իր ռևոլյուցիոն գործունեությունը, կապ է հաստատում տեղական բոլշևիկյան կազմակերպությունների հետ, աշխատակցում է «Պրավդային», ջերմ նամակագրություն սկսում Վ. Ի. Լենինի հետ, խորհրդակցում պարտիական բազմապիսի հարցերի, առանձնապես ազգային հարցի վերաբերյալ։ 1913—1915 թվականներին Ստ. Շահումյանի՝ Վ. Ի. Լենինին ազգային հարցի առթիվ գրած նամակները արժեքավոր ավանդ են Կոմունիստական պարտիայի ազգային ծրագրի մշակման գործում։

Աստրախանի աքսորավայրից Շահումյանը մշտական կապ է պահպանում Բաքվի բոլշևիկյան կազմակերպության հետ։ 1913 թվականի գարնանը Շահումյանը, Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ, անլեգալ կերպով մեկնում է Պետերբուրգ և որոշ ժամանակ աշխատում է «Պրավդայում»։

Աստրախանի աքսորավայրում Շահումյանը գրում է իր «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» նշանավոր երկը, որը առաջին անգամ հրապարակվել է 1914 թվականին և արժանացել Վ. Ի. Լենինի ուշադրությանը։ Այդ երկը արժեքավոր ավանդ է ազգային հարցի վերաբերյալ բոլշևիկյան պարտիայի թեորիայում։ Այստեղ նա մերկացնում է ազգային կուլտուրական ավտոնոմիայի բուրժուա-նացիոնալիստական էությունը, հատկապես հայ «սպեցիֆիկների» և նրանց պարագլուխ Դ. Անանունի ռեակցիոն գաղափարախոսությունը։

Այսպիսով, Ստ. Շահումյանը ռեակցիայի ժամանակաշրջանում և բանվորական շարժման նոր վերելքի տարիներին շարունակում է իր ռևոլյուցիոն եռուն գործունեությունը, սերտ կապ է պահպանում ռևոլյուցիայի առաջնորդ Վ. Ի. Լենինի հետ, ակտիվորեն պայքարում է ազգային հարցի վերաբերյալ լենինյան ցուցումների կենսագործման համար, հանդես է գալիս որպես պրոլետարական ինտերնացիոնալիզմի ջատագով։

4

1914 թվականի մարտին Շահումյանը աստրախանյան աքսորավայրից վերադառնում է Բաքու և գլխավորում պարտիական կազմակերպությունը, ղեկավարում Բաքվի պրոլետարիատի պայքարը և, մասնավորապես, Բաքվի բանվորների 1914 թվականի ամռան խոշոր գործադուլը։

Բաքվի բոլշևիկները Ստ. Շահումյանի ակտիվ մասնակցությամբ պայքար են ծավալում իմպերիալիստական-թալանչիական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու վերաբերյալ բոլշևիկյան լոզունգի կենսագործման համար։

1915 թվականի սկզբին Ստ. Շահումյանն ստանում է Վ. Ի. Լենինի «Ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները եվրոպական պատերազմում» թեզիսները, որոնք քննարկվում և ջերմորեն ընդունվում են Բաքվի բոլշևիկների կողմից։

Անդրկովկասի պարտիական կազմակերպությունների է՛լ ավելի համախմբման համար Վ. Ի. Լենինի ցուցումներով, Շահումյանի անմիջական ղեկավարությամբ, 1915 թվականի հոկտեմբերին հրավիրվում է Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների խորհրդակցություն-կոնֆերենցիա, որտեղ քննարկվում են պատերազմի և ընթացիկ մոմենտի, ազգային, կազմակերպական և այլ հարցեր։ Ստ. Շահումյանը ելույթ ունեցավ բոլոր հիմնական հարցերի շուրջը։ Կոնֆերենցիան հերթական խնդիրներ էր համարում ինքնակալության տապալումը, բանվորների ու գյուղացիների դաշինքի ամրապնդումը, իսկ այնուհետև՝ սոցիալիստական ռևոլյուցիան։

Կոնֆերենցիան ընտրեց ղեկավար պարտիական կենտրոն՝ ՌՍԴԲՊ Կովկասյան Բյուրո Ստ. Շահումյանի գլխավորությամբ։

Ստ. Շահումյանը շատ ջանքեր գործադրեց կոնֆերենցիայի որոշումների կատարման համար։ Նա շարունակում էր կապ պահպանել Վ. Ի. Լենինի հետ և նրանից ցուցումներ էր ստանում։ 1915 թվականի նոյեմբերի 1-ին Վ. Ի. Լենինին և Ն. Կ. Կրուպսկայային ուղարկած նամակում Ստ. Շահումյանը գրել է. «...Ձեր նամակները, խորհուրդները և ցուցումները ինձ համար միշտ էլ ամեն բանից թանկ են եղել... Դուք ուզում եք իմանալ, թե ինչ եմ մտածում ես և ինչ եմ անում։ Կարծես այս անգամ էլ Ձեզ հետ միանման եմ մտածում... Ես և մեր ամբողջ գերդաստանը [բոլշևիկները] բարձր ենք պահում մեր ընտանեկան [բոլշևիկների] դրոշը և... Դուք կարող եք հանգիստ լինել մեր ռեպուտացիայի նկատմամբ»[1]։

Ստ. Շահումյանը միշտ պայքարել է մարքսիստական թեորիայի անաղարտության համար, մարքսիզմը աղճատելու, գռեհկացնելու և աղավաղելու ռևիզիոնիզմի բոլոր և ամեն տեսակ փորձերի դեմ։

Ստ. Շահումյանը պարզ հասկանում էր, որ առանց ջախջախելու օպորտունիստներին, ռևիզիոնիստներին, բուրժուական նացիոնալիստներին, անհնարին է հասնել բանվոր դասակարգի միասնության և կազմակերպվածության, իսկ առանց այդ միասնության անհնարին է պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակը։ Նա բոլոր ուժերով պայքարում էր հանուն դեմոկրատական ցենտրալիզմի, հանուն ներպարտիական կյանքի լենինյան նորմաների պահպանման,

[1] ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 16, ед. хр. 27194, лл. 1—2.

հանուն բոլոր ազգությունների բանվորների համախմբման միասնական մարքսիսական բոլշևիկյան պարտիայի մեջ։

1916 թվականի մարտի 7-ին Ստ. Շահումյանը Գրոզնի քաղաքում ձերբակալվեց։ Էտապով նրան փոխադրում են Բաքու և կալանավորում Բայիլովի բանտում, որտեղ նրան պահեցին մինչև 1916 թվականի նոյեմբերի կեսերը։ Նույն թվականին Ստ. Շահումյանը գրում է բուրժուական նացիոնալիզմը մերկացնող մի շարք հոդվածներ։ Հատուկ ուշադրության են արժանի «Պայքար» թերթում տպագրված նրա հոդվածները։ «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը» հոդվածում Ստ. Շահումյանը բնորոշում է բուրժուական ինտելիգենցիայի դերը հասարակական կյանքում, բացահայտում նացիոնալիզմի էությունը, ցույց է տալիս, թե ինչպիսի վնաս է հասցնում այն ժողովուրդների պրոդրեսիվ զարգացմանը, նա նացիոնալիզմին հակադրում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները։

1916 թվականի դեկտեմբերին, տասնամյա բանտային կալանքից հետո Ստ. Շահումյանին Բաքվից աքսորում են Պովոլժյե, Սարատով քաղաք։ Սարատովյան աքսորում Շահումյանը շարունակում է իր ռևոլյուցիոն գործունեությունը, հարազատներին և ընկերներին գրած նամակներում ուժ ու կորով է ներշնչում ապագայի նկատմամբ։

5

1917—1918 թվականները Ստ. Շահումյանի կյանքի ու գործունեության ամենաարդյունավետ, ամենահաղեցած տարիներն են։ Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի շնորհիվ ազատվելով ցարական աքսորից, Ստ. Շահումյանը վերադառնում է Բաքու։ Ճանապարհին նա իմանում է, որ չնայած մենշևիկների, էսեռների, մուսավաթականների և դաշնակների ստոր դավաճանական քաղաքականությանը, չնայած նրանց կատաղի դիմադրությանը, Բաքվի պրոլետարիատը հեռակա կարգով նրան ընտրել է Բանվորների ու զինվորների դեպուտատների Բաքվի Սովետի նախագահ։

Ինչպես հայտնի է, փետրվարյան ռևոլյուցիայից հետո, 1917 թվականի մարտի 9-ին ժամանակավոր կառավարությունը կազմակերպեց Անդրկովկասյան Հատուկ Կոմիտե (ՕԶԱԿՈՄ), որը հետո փոխարինվեց Անդրկովկասյան Սեյմով։ Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն իշխանությունները հասցրին այն բանին, որ Անդրկովկասը անջատվեց ռևոլյուցիոն Ռուսաստանից և Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի այսպես կոչված «անկախ» ռեսպուբլիկաներում իշխանությունն անցավ կոնտրռևոլյուցիոն պարտիաների՝ մենշևիկների, մուսավաթների և դաշնակների՝ օտարերկրյա իմպերիալիստների լակեյների ձեռքը։

Անդրկովկասի բոլշևիկները Ստ. Շահումյանի գլխավորությամբ պայքարի ելան ընդդեմ կոնտրռևոլյուցիայի, հանուն երկրամասում Սովետական իշխանության հաստատման։ Իր ամբողջ ռևոլյուցիոն եռանդը, քաղաքական ղեկավարի և կազմակերպչի իր ամբողջ տաղանդը Ստ. Շահումյանը նվիրաբերում է Անդրկովկասում Մեծ Հոկտեմբերի հաղթանակի համար մղվող պայքարի գործին։ Ստ. Շահումյանն իր շուրջը համախմբեց փորձված լենինյաններին՝ Պ. Ջափարիձեին, Ի. Ֆիոլետովին, Մ. Աղիզբեկովին, Ն. Նարիմանովին, Ա. Միկոյանին և ուրիշներին։ Շահումյանի ղեկավարությամբ նրանք լարված պայ-

քար ծավալեցին մասսաներին բոլշևիկների կողմը գրավելու համար և Լենինի Ապրիլյան թեզիսների ու Ապրիլյան պարտիական կոնֆերենցիայի որոշումների պարզաբանման ուղղությամբ։

1917 թվականի հունիսին Ստ. Շահումյանը մեկնում է Պետրոգրադ՝ մասնակցելու բանվորների և զինվորների դեպուտատների Սովետների Համառուսաստանյան առաջին համագումարին։ Այստեղ Շահումյանը կրկին հանդիպում է մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի հետ։ «Ընկ. Շահումյանին՝ Ստեփանին, որը հսկայական ազդեցություն ուներ Բաքվի պրոլետարիատի վրա, մենք վաղուց էինք ճանաչում,— գրել է Ն. Կ. Կրուպսկայան։— Եվ 1917 թվականին Իլյիչը ուրախ էր Ստեփանին տեսնելու և այդ ժամանակներում բոլշևիկների առջև այնքան սրությամբ ծառացած բոլոր հարցերի շուրջը նրա հետ անմիջականորեն խոսելու համար»[1]։

Սովետների Համառուսաստանյան առաջին համագումարում Շահումյանը հանդես է գալիս հաշտության վերաբերյալ բանաձևով։ Այդ համագումարում նա ընտրվում է Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի անդամ։

Կովկասում սարդացող իրադարձությունները Շահումյանին հնարավորություն չեն տալիս անմիջական մասնակցություն ունենալու պարտիայի VI համագումարին. ՌՍԴԲՊ VI համագումարը Ստ. Շահումյանին ընտրում է ՌՍԴԲՊ(բ) Կենտրոնական Կոմիտեի անդամ։

1917 թվականի սեպտեմբերին Ստ. Շահումյանը Պետրոգրադում մասնակցում է պարտիայի Կենտրոնական Կոմիտեի այն պատմական նիստերին, որտեղ քննարկվում էին Վ. Ի. Լենինի նամակները զինված ապստամբության մասին։ Այդ ժամանակաշրջանում Ստ. Շահումյանը հանդես է գալիս բազմաթիվ բոցավառ ճառերով ու հոդվածներով, որոնց մեջ մերկացնում է ժամանակավոր կառավարությանը, կոնտրռևոլյուցիոն պարտիաների դավաճանական քաղաքականությունը, աշխատավոր մասսաներին նախապատրաստում զինված ապստամբության։

1917 թ. հոկտեմբերի 15-ից մինչև 20-ը Թիֆլիսում տեղի ունեցավ Կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների առաջին համագումարը, որը մեծ դեր խաղաց ռևոլյուցիայի նախօրյակին բոլշևիկյան ուժերի համախմբման գործում։ Համագումարում քննարկվեցին ընթացիկ մոմենտի, Սահմանադիր ժողովի ընտրությունների, ազգային, ագրարային, կազմակերպական հարցեր և այլն։ Բոլոր հարցերով համագումարն ընդունեց բոլշևիկյան որոշումներ, ընտրեց Կովկասի պարտիական կազմակերպությունների ղեկավար օրգան՝ ՌՍԴԲՊ(բ) Երկրային Կոմիտե, որը միավորում էր բոլոր բոլշևիկյան կազմակերպությունները, այդ թվում Կովկասյան ռազմաճակատի բոլշևիկյան կազմակերպությունները։

ՌՍԴԲՊ(բ) Կովկասյան Երկրային Կոմիտեի կազմում ի թիվս ուրիշների ընտրվեց նաև Ստ. Շահումյանը։

Հոկտեմբերի 7-ին Ստ. Շահումյանը մի քանի օրով Թիֆլիսից մեկնում է Ալեքսանդրապոլ։ Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունները ջերմորեն էն դիմավորում հավատարիմ լենինյան Ստ. Շահումյանին։ Նրա Ալեքսանդրապոլում գտնվելը և նրա անցկացրած միջոցառումները վճռական դեր

[1] *Н. К. Крупская*, Воспоминания о Ленине, М., 1957, стр. 289—290.

խաղացին Հայաստանում Սովետական իշխանության հաստատման համար աշխատավորների մղած հետագա պայքարում։

Ստ. Շահումյանը մեծագույն եռանդով անցնում է աշխատանքի, չտեսնված ջանքեր է գործադրում Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակն ապահովելու համար։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի դրոշակակիրն Անդրկովկասում Բաքվի հերոսական պրոլետարիատն էր։ Ստ. Շահումյանի կողմից ղեկավարվող բանվորների ու զինվորների դեպուտատների Բաքվի Սովետը, Հոկտեմբերյան ռևոլյուցիայից մի քանի օր անց, հոկտեմբերի 31-ին Անդրկովկասում առաջինը ողջունեց Սովետական իշխանության հաղթանակը և, հաղթահարելով մենշևիկների, էսեռների ու դաշնակների դիմադրությունը, նոյեմբերի 2-ին ընդունեց գործնական ծրագիր իշխանությունն իր ձեռքը վերցնելու մասին։

1917 թ. նոյեմբերի 4-ին (17-ին) Բաքվի Սովետի ընդունած կոչում այդ առթիվ ասված է. «Բոլորը, ովքեր ցանկանում են ժողովրդի բարօրություն, խաղաղություն և կարգի ամենաշուտ հաստատում տանջված ու խոշտանգված երկրում, պետք է անհապաղ և վճռականապես կանգնեն Լենինի գլխավորած ժողովրդական Կոմիսարների նոր կառավարության կողմը»։

Բայց այդ ժամանակ Բաքվի Սովետում մեծամասնություն էին կազմում էսեռա-մենշևիկյան, նացիոնալիստական պարտիաները։ Նրանք կռվում էին ռևոլյուցիայի դեմ, խեղդում մինչև իսկ Փետրվարյան ռևոլյուցիայի շնորհիվ ձեռք բերած չնչին ազատությունները։

1917 թվականի դեկտեմբերի 16-ին Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Սովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ քննարկում է Կովկասում ստեղծված դրությունը և որոշում է Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի Գործերի ժամանակավոր Արտակարգ կոմիսար։ Անդրկովկասի բանվորները, գյուղացիները և զինվորները մեծ գոհունակությամբ ընդունեցին Ստ. Շահումյանի Կովկասի Գործերի Արտակարգ կոմիսար նշանակվելը։ Ստ. Շահումյանը մեծ աշխատանք է կատարում, հաճախակի հանդես է գալիս բանվորների, զինվորների առջև, մասնակցում է պարտիական կազմակերպությունների ժողովներին։ Հավանություն տալով Ստ. Շահումյանի եռանդուն գործունեությանը և ողջունելով նրա ակտիվ ռևոլյուցիոն պայքարը, Վ. Ի. Լենինը իր 1918 թվականի փետրվարի 14-ի հեռագրում ասել է.

«Թանկագին ընկեր Շահումյան։

Շատ շնորհակալ եմ նամակի համար։ Մենք հրճվանքի մեջ ենք ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությունից։ Կարողացեք դրան միացնել այն ամենաղղույշ դիվանագիտությունը, որը անպայման թելադրվում է այժմյան դժվարագույն դրությամբ — և մենք կհաղթենք։

Դժվարություններն անհաշիվ են։ Առայժմ մեզ փրկում են միայն իմպերիալիստների հակասությունները, կոնֆլիկտներն ու պայքարը։ Կարողացեք օգտագործել այդ կոնֆլիկտները։

Լավագույն ողջույններ ու ցանկություններ և ողջույն բոլոր բարեկամներին։

Վ. Ուլյանով (Լենին)»[1]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 359։

Վ. Ի. Լենինի հեռագիրը էլ ավելի ոգեշնչեց Անդրկովկասի բոլշևիկներին։ Փետրվարի վերջերին Շահումյանը Կովկասյան ռազմաճակատից մեկնող զորքերի հետ էշելոնով ժամանում է Բաքու և այնտեղ նոր ուժով պայքար է ծավալում երկրամասում սովետական կարգերի հաղթանակի համար։

1918 թվականի ապրիլի 1-ին Բաքվում հաղթանակեց Սովետական իշխանությունը, սկսվեց հերոսական Բաքվի Կոմունայի ժամանակաշրջանը։ Նոր ստեղծված Բաքվի Կոմունան ստիպված էր պայքարել երկու ճակատով՝ ներքին և արտաքին թշնամու դեմ։

Կոմունայի հաստատումից անմիջապես հետո Ստ. Շահումյանը ժողովրդական Կոմիսարների Սովետին զեկուցում է ստեղծված իրադրության մասին, նշելով, որ Անդրկովկասը թեակոխել է Սովետական իշխանության համար մղվող զինված ակտիվ պայքարի ժամանակաշրջանը։

1918 թվականի ապրիլի 25-ին Բաքվի Սովետը ստեղծում է ժողովրդական Կոմիսարների Սովետ՝ Ստ. Շահումյանի նախագահությամբ։

Կարճ ժամանակամիջոցում Բաքվի Կոմունան թշնամիների դեմ մղած դաժան պայքարում իրականացրեց մի ամբողջ շարք սոցիալիստական միջոցառումներ՝ ստեղծեց Կարմիր Բանակ, ազգայնացրեց նավթային արդյունաբերությունը, բանկերը, առևտրական նավատորմը, կոնֆիսկացիայի ենթարկեց կալվածատերերի ու բեգերի հողերը հօգուտ գյուղացիության, վերացրեց հին դատարանը և ստեղծեց տեղական ժողդատարաններ, կազմակերպեց ժողովրդական կրթության գործը և այլն։

Բաքվի Կոմունան շարունակում էր հերոսաբար դիմադրել օտարերկրյա զավթիչներին և մուսավաթական ու այլ կոնտրռևոլյուցիոն բանդաներին։ Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, Շահումյանն ու նրա զինակիցները դիվանագիտորեն օգտագործում էին իմպերիալիստական պետությունների և ներքին կոնտրռևոլյուցիոն ուժերի միջև եղած հակասությունները։

1918 թվականի հուլիսի երկրորդ կեսին Կոմունայի դրությունը խիստ վատանում է։ Արևմուտքից Բաքվի վրա է հարձակվում գերմանա-թուրքական բանակը՝ մուսավաթական բանդաների հետ միասին, հյուսիսից արշավում էին իմամ Գոցինսկու հրոսակախմբերը, ծովից սպառնում էին անգլիական զորքերը։ Կոմունայի համար ծանր ու վճռական այդ պահին դաշնակները լքեցին ռազմաճակատը և պահանջեցին անգլիացիներին հրավիրել Բաքու։

Իբրև ականավոր պետական գործիչ, Ստ. Շահումյանը անողոքաբար մերկացնում էր մենշևիկների, էսեռների ու դաշնակների քաղաքականությունը, որոնք պահանջում էին անգլիացիներին հրավիրել Բաքու։ Նա բացահայտեց օտարերկրյա զավթիչների իսկական մտադրությունները և ցույց տվեց, որ նրանց հարձակումը Բաքվի վրա մտնում է ամերիկյան, անգլիական, ֆրանսիական և գերմանական իմպերիալիստների՝ Ռուսաստանում մղած պատերազմի պլանների մեջ։

Ստ. Շահումյանը կոչ էր անում բանվորներին պատրաստվել ոչ միայն պաշտպանության, այլև հարձակման, արտահայտում էր իր խոր վստահությունը, որ Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների ակտիվ աջակցությամբ, Ռուսաստանի պրոլետարիատի օգնությամբ Բաքվի Կոմունան կամրապնդվի և կդառնա ամբողջ Անդրկովկասի աշխատավորության հենարանը։

Կոնտրռևոլյուցիոն պարտիաներն ամեն ինչ անում էին Բաքվի պաշտպանությունը ներսից թուլացնելու և քաղաքը անգլիացիներին հանձնելու հա-

մար։ Նրանց դավաճանական մտադրությունները պարզ դարձան Բաքվի Սովետի նիստում, որտեղ օգտագործելով իրենց մեծամասնությունը և մոլորության մեջ գցելով Սովետի առանձին անդամներին, նրանք կարողացան ձայների չնչին մեծամասնությամբ՝ 259-ը ընդդեմ 236-ի, անցկացնել անգլիացիներին Բաքու հրավիրելու վերաբերյալ բանաձևը։ Այդ բանաձևն ընդունվեց 1918 թ. հուլիսի 25-ին։

Բաքվի բոլշևիկները Ստ. Շահումյանի գլխավորությամբ մինչև վերջ պաշտպանեցին իրենց դիրքերը, հանդես գալով կոնտրռևոլյուցիոներների դավաճանական մտադրությունների դեմ, մերկացնելով նրանց նողկալի խաբեությունը։ Ստ. Շահումյանը ցույց տվեց, որ Անդրկովկասի մենշևիկները, էսեռները ու դաշնակները գործնականում վարում են նույն հակաժողովրդական քաղաքականությունը, որպիսին վարում էին կադետները, մենշևիկներն ու էսեռները Ռուսաստանում։

Հուլիսի 31-ին Սովետական իշխանությունը Բաքվում ժամանակավորապես ընկավ։ Օգոստոսի 1-ին Կասպիական Նավատորմի Գործադիր Կոմիտեի և էսեռա-մենշևիկյան Ժամանակավոր Գործադիր Կոմիտեի ներկայացուցիչներից ձևավորվում է կոնտրռևոլյուցիոն կառավարություն՝ «Ցենտրոկասպիայի դիկտատուրան», որի մեջ մտան Բաքվի պրոլետարիատի բոլոր դավաճաններն ու մատնիչները՝ մենշևիկները, էսեռները, դաշնակներն ու մուսավաթականները։ Նրանք անգլիական իմպերիալիստների հետ միասին հալածանք սկսեցին բոլշևիկների դեմ։

Սեպտեմբերի 12-ին անգլիական զավթիչները շտապ թողեցին Բաքուն։ Իսկ սեպտեմբերի 15-ին թուրքական ու մուսավաթական բանդաները ներխուժեցին քաղաք։ Բաքվի փողոցները ողողվեցին բանվորների արյունով։ Դրանից քիչ առաջ Ա. Միկոյանի ղեկավարությամբ մի խումբ բոլշևիկների հաջողվում է կոմիսարներին ազատել բանտից, որտեղ նրանք մահվան էին դատապարտված, և տեղափոխել «Թուրքմեն» նավը, որն ուղղություն վերցրեց դեպի Աստրախան։ Բաց ծովում անգլիական իմպերիալիստներն ու էսեռները զենքի ուժով կանգնեցրին նավը և ստիպեցին նրան ուղղություն վերցնել դեպի Կրասնովոդսկ։ Տեղական կոնտրռևոլյուցիոն իշխանությունները ձերբակալված կոմիսարներին ու նրանց ընտանիքների անդամներին բանա նետեցին։ 1918 թվականի սեպտեմբերի 20-ին Կրասնովոդսկ-Աշխաբադ երկաթուղու 207-րդ վերստի վրա, Ախչա-Կույմա և Պերեվալ կայարանների միջև, անդրկասպյան ամայի ավազուտներում անգլիական իմպերիալիստներն ու նրանց ստոր վարձկան էսեռական դահիճները զնդակահարեցին 26 կոմիսարներին։

* * *

Ողբերգական մահը անժամանակ կտրեց Ստեփան Շահումյանի, նշանավոր ռևոլյուցիոների, պարտիական ու պետական ակտիվ գործչի կյանքի թելը՝ իր ուժերի և բազմակողմանի տաղանդի բուռն ծաղկման շրջանում։ Միշտ անմոռաց և լուսապայծառ Շահումյանը ուներ վիթխարի էրուդիցիա, երկաթյա տրամաբանություն, ազնիվ, բյուրեղյա սիրտ, անզուգական հմայք։ Նա թողել է տեսական-գրական հարուստ ժառանգություն, որը խոշոր ավանդ է հանդիս սնում մարքսիզմ-լենինիզմի դանձարանում, հատու զենք աշխատավորների, հատկապես երիտասարդության կոմունիստական դաստիարակության գործում։ Նա-

հումյանը պատկանում է մեր պարտիայի և ռևոլյուցիոն բանվորական շարժման այն առաջնորդների համաստեղությանը, որոնց մասին Վ. Ի. Լենինը ասել է, թե «առանց «մի տասնյակ» տաղանդավոր (իսկ տաղանդները հարյուրներով չեն ծնվում), փորձված, պրոֆեսիոնալ կերպով պատրաստված և երկարատև դպրոցում սովորած առաջնորդների, հիանալի կերպով միմյանց համամիտ առաջնորդների անհնարին է ժամանակակից հասարակության մեջ որևէ դասակարգի տոկուն պայքարը»[1]։

«Ոչ մի անուն այնպիսի պայծառ ու վառ լուսապսակով չի շրջապատված,— գրել է բանաստեղծ Վահան Տերյանը,— ո՛չ մի անուն այնքան մրրկալի հուզում, այնպիսի այրող կսկիծ, այնքան անսահման քնքշություն ու սեր չի հարուցանելու Կովկասյան պրոլետարիատի կրծքում, ինչպես Ստեփան Շահումյանի անունը»[2]։

Շահումյանի անունն ապրում է կոմունիզմ կառուցող մարդկանց սրտերում։ Անմահ է նրա հիշատակը։

ПА-12-303.

СТЕПАН ШАУМЯН

Х. А. БАРСЕГЯН

(Резюме)

13 октября 1958 г. исполнилось 80 лет со дня рождения С. Г. Шаумяна. Жизнь и деятельность выдающегося деятеля Коммунистической партии и Советского государства, верного ученика и соратника В. И. Ленина — Степана Георгиевича Шаумяна — неразрывно связаны с историей революционного движения в Закавказье и России. С конца 90-х годов прошлого столетия С. Г. Шаумян вместе с другими учениками В. И. Ленина возглавлял борьбу трудящихся масс Закавказья, с неисчерпаемой энергией боролся за создание и укрепление закавказской большевистской организации — одного из старейших отрядов марксистской революционной партии — партии нового типа. Входя в состав руководящего ядра ленинской партии, С. Г. Шаумян высоко держал знамя ленинизма, беспощадно разоблачал контрреволюционную сущность буржуазной идеологии и активно боролся против всяких проявлений оппортунизма, против шатаний от последовательной стратегии и тактики, против ревизионизма. С. Г. Шаумян был не только крупнейшим организатором, профессиональным революционером-ленинцем, но и видным теоретиком Коммунистической партии, талантливым публицистом, «тяжелой артиллерией теоретического марксизма», как образно характеризовал его Г. К. Орджоникидзе.

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 5, էջ 614։

[2] Վ. Տերյան, Անմոռաց ընկեր..., «Կարմիր դրոշակ», № 2, Մոսկվա, 25 մայիսի, 1919։